



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2014 թվականի N Մ- 472 -Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N Մ-090-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Օրբան» բարեգործական հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագրծի 2014 թվականի հունիսի 3-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-090-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագիրը և բեռի բաշխման ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում են).

2) որոշման 1-ին կետում «51,170,450» թիվը փոխարինել «47,646,690» թվով.

3) որոշման 2-րդ կետում «(6,504 հատ քնապարկ (որպես տաք վերմակ) և 40 հատ վրան, 9814 կգ ընդհանուր քաշով, 122,890 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, «Արարատյան» ՏՄ)» բառերը փոխարինել «(5,796 հատ քնապարկ (որպես տաք վերմակ) և 40 հատ վրան, 8,757 կգ ընդհանուր քաշով, 111,130 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով նեառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ)» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳ



ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ